

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

"Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն/ծրագրային խմբի սահմանում" IRFSP/TA/QCBS-2016/023

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Որակի և Գնի վրա հիմնված ընտրություն*

ԳԶՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

Ծրագրի նպատակն է՝

Տեխնիկատնտեսական (թիրախների) ուսումնասիրության նպատակն է ԾԻԳ-ին տրամադրել ծրագրի առանցքային ցուցանիշների վերաբերյալ հանգամանալից քանակական և որակական տվյալներ, լիարժեք պատկերացում տալ թիրախային տարածքներում տնային տնտեսությունների մակարդակով սոցիալ-տնտեսական միջավայրի, գյուղատնտեսական արտադրության արդիականացման և ինտենսիվացման, ինչպես նաև կարողությունների ստեղծման կարիքների վերաբերյալ: Այս առաջադրանքի հիմնական խնդիրը կլինի իրականացնել տեխնիկատնտեսական/թիրախների ուսումնասիրություն՝ կատարելով.

- ա) թիրախային խմբերի սոցիալ-տնտեսական բնութագրերի կազմում,
- բ) թիրախային խմբերի կարիքների գնահատում գյուղատնտեսական արտադրության արդիականացման և ինտենսիվացման տեսանկյունից, որոնց հիման վրա էլ կորոշվեն սթարթափ փաթեթների տեսակները և բաղադրիչները/տարրերը,
- գ) ուսուցման կարիքների վերլուծություն, որի հիման վրա կմշակվեն ուսուցման մոդուլներ՝ գյուղատնտեսության, ֆինանսների և բիզնեսի պլանավորման թեմաներով:

Թիրախավորման մոտեցումներ

Ակնկալվում է, որ ուսումնասիրությունը երևան կրերի լրացուցիչ մանրամասներ համայնքների կազմի վերաբերյալ և հնարավորություն կտա որոշել 5 թիրախային խմբեր՝ ստորև բերված սահմանումներին համապատասխան.

- 1) տնային տնտեսություններ, որոնք մշակում են թիրախային համայնքներում ոռոգման նոր ցանցերի շուրջ գտնվող հողատարածքներ,
- 2) տնային տնտեսություններ, որոնք որպես սեփականություն ունեն, չեն մշակում, սակայն հետաքրքրված են մշակել ոռոգման նոր ցանցերի շուրջ գտնվող հողատարածքներ,
- 3) թիրախային համայնքների անդամներ, ովքեր չունեն կամ չեն մշակում ոռոգման նոր ցանցերի շուրջ գտնվող հողատարածքներ, սակայն եկամուտ են ստանում գյուղատնտեսությունից (վաճառում են ավելի քան 40 տոկոս գյուղատնտեսական արտադրանք),
- 4) կանանց կողմից ղեկավարվող կամ ակտիվ կին անդամներ ունեցող տնային տնտեսություններ, որոնք չունեն կամ չեն մշակում ոռոգման նոր ցանցերի շուրջ գտնվող հողատարածքներ, սակայն եկամուտ են ստանում գյուղատնտեսությունից (վաճառում են ավելի քան 40 տոկոս գյուղատնտեսական արտադրանք): Այս խմբի համար պետք է ձևակերպվի հստակ սահմանում՝ վերոնշյալ թիրախային խմբերի հետ համընկումներից խուսափելու նպատակով:
- 5) երիտասարդների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ, որոնք չունեն կամ չեն մշակում ոռոգման նոր ցանցերի շուրջ գտնվող հողատարածքներ, սակայն եկամուտ են ստանում

գյուղատնտեսությունից (վաճառում են ավելի քան 50 տոկոս գյուղատնտեսական արտադրանք): Այս խմբի համար պետք է ձևակերպվի հստակ սահմանում՝ վերոնշյալ թիրախային խմբերի հետ համընկումներից խուսափելու նպատակով:

Թիրախների ուսումնասիրության մեթոդները կներառեն տեղեկատվության/ տվյալների հավաքագրում, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ) համայնքների 5 թիրախային խմբերի հետ: Յուրաքանչյուր թիրախային խմբի հետ ՖԽՔ-ում պետք է ընդգրկվեն տեղական ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարներ (ավագանու անդամներ, գյուղապետարանի ղեկավարություն և այլն): Առաջադրանքը պետք է բաղկացած լինի երկու փուլից. (I) 5 թիրախային խմբերի վերաբերյալ ընդհանուր տվյալների հավաքագրում ստորև նկարագրված ցուցանիշների համաձայն, (ii) սահմանված թիրախային խմբերի կարիքների գնահատում գյուղատնտեսական արտադրության արդիականացման և ինտենսիվացման տեսանկյունից, ինչպես նաև ուսուցման կարիքների գնահատում:

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր:

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվություն;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),

Կարճ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝

- Վերջին հինգ տարիների ընթացքում տեխնիկատնտեսական ուսումնասիրության/ծրագրային խմբի սահմանման ընդհանուր փորձառություն (առավելագույնը 50 միավոր)
- Վերջին հինգ տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում տեխնիկատնտեսական ուսումնասիրության/ծրագրային խմբի սահմանման հատուկ փորձառություն (առավելագույնը 50 միավոր)

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 2-3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. [/https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b](https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b) / սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2017թ. Մարտի 24-ը, ժ. 17.00:

ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ:

Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 – 10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 – 58; e-mail: procurement@raed.am